ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

31.01.2024թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԵԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 31.01.2024թ զեկուցագրով ներկայացված "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը*.

<u>1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի Պատվիրատուի ղեկավարին ուղղված 27.12.2023 և 31.01.2024 թվականների զեկուցագրերով հայտնել է հետևյալը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 5, 6, 8, 10, 16, 17, 18, 19, 21, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 32, 35, 36, 40, 42, 44, 45, 50, 54, 56, 72, 74, 75-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 90036001, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077, էլեկտրոնային հասցե՝ ms.foton2014@mail.ru), որի հետ 05.01.2023թ կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ համապատասխանաբար 13.01.2023թ կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:

01.12.2023թ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի մասնակիցը տեղեկացրել է, որ չի կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունների մի մասը, քանի որ գտնվում է լուծարային գործընթացում: Այդ օրվանից ի վեր ընկերությունը չի մատակարարել Պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

Այգու կարիքների համար սնունդի ձեռքբերումն ունի կենսական նշանակություն և կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված՝ որոշում է կայացվել միակողմանիորեն ամբողջությամբ լուծել Պայմանագիրը:

Պայմանագիրը կնքելիս մասնակիցը ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, համապատասխանաբար. որակավորման ապահովում՝ 6,307,950.00 (վեց միլիոն երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 725,773.50 ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 4,205,300.00 (չորս միլիոն երկու հարյուր հինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 483,849.00 ՀՀ դրամ, և մասնակցին՝ 27.12.2023թ գրությամբ առաջարկվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում ապահովել պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման վճարների գանձումը:

Նշյալի մասին՝ 27.12.2023թ գրությամբ տեղեկացվել է նաև Մասնակցին սպասարկող բանկային կազմակերպությանը:

Հաշվի առնելով, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ և "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.01.2023թ կնքված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով ապրանքի ձեռքբերման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետով սահմանված պահանջների համաձայն «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը 2023թ դեկտեմբերի 27-ից միակողմանիորեն լուծելով Պայմանագիրը՝ պատշաճ կերպով 27.12.2023թ ծանուցել է "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին հիշյալի մասին՝ միաժամանակ առաջարկելով սահմանված ժամկետում ապահովել պայմանագրի չկատարած ծավալի նկատմամբ պայմանագրի կատարման ապահովման գումարի և որակավորման ապահովման գումարի վճարների գանձումը, սակայն "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել վերոնշյալ պահանջը, առաջարկում ենք "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<u>2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 90036001, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077, էլեկտրոնային հասցե՝ ms.foton2014@mail.ru), որի հետ 05.01.2023թ կնքվել է

ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով ապրանքի ձեռքբերման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. 01.12.2023թ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի մասնակիցը տեղեկացրել է, որ չի կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, քանի որ գտնվում է լուծարային գործընթացում: Այդ օրվանից ի վեր ընկերությունը չի մատակարարել Պայմանագրերով նախատեսված ապրանքները: Մինչ այդ ընկերությունը պատշաճ ձևով իրականացրել է ստանձնված պարտավորությունները:

3. Պայմանագիրը կնքելիս մասնակիցը ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, համապատասխանաբար. որակավորման ապահովում՝ 6,307,950.00 (վեց միլիոն երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 725,773.50 ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 4,205,300.00 (չորս միլիոն երկու հարյուր հինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 483,849.00 ՀՀ դրամ, և մասնակցին՝ 27.12.2023թ գրությամբ առաջարկվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում, ապահովել պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման վճարների գանձումը:

4. Սահմանված ժամկետում՝ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել որակավորման ապահովման 725,773.50 (յոթ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներեք ամբողջ հիսուն հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման՝ 483,849.00 (չորս հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունինը) ՀՀ դրամի չափով գանձումները:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ա. Հարությունյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝

ռուսերեն, վարում և իրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման գնման Ընթացակարգի շրջանակներում՝ 5, 6, 8, 10, 16, 17, 18, 19, 21, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 32, 35, 36, 40, 42, 44, 45, 50, 54, 56, 72, 74, 75-րդ չափաբաժինների մասով, "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն ընտրվել է հաղթող /ընտրված/ մասնակից, որի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն 05.01.2023թ կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով ապրանքի ձեռքբերման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 13.01.2023թ կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցերի հաստատման համաձայնագիր:

01.12.2023թ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն՝ համաձայն որի, մասնակիցը տեղեկացրել է, որ չի կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, քանի որ գտնվում է լուծարային գործընթացում: Այդ օրվանից ի վեր ընկերությունը չի մատակարարել Պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Պայմանագիրը կնքելիս մասնակիցը ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, համապատասխանաբար. որակավորման ապահովում՝ 6,307,950.00 (վեց միլիոն երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 725,773.50 (յոթ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներեք ամբողջ հիսուն հարյուրերորդական) ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 4,205,300.00 (չորս միլիոն երկու հարյուր հինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 483,849.00 (չորս հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, և մասնակցին՝ 27.12.2023թ գրությամբ առաջարկվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում, ապահովել պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման վճարների գանձումը:

Սահմանված ժամկետում՝ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել որակավորման ապահովման՝ 725,773.50 (յոթ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներեք ամբողջ հիսուն հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման՝ 483,849.00 (չորս հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունինը) ՀՀ դրամի չափով գանձումները:

Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ "ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. “ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, “ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեությունը հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	**խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը**	**որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**	
“ՖՈՏՈՆ» ՍՊԸ	90036001	ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58	X	X		3 1.01.2024թ. ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ **ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**